«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը պատմության դասավանդման գործընթացում

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Օֆիկ Խլխաթյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արարատի մարզ Դիմիտրովի միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 5
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 9
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչը մանկավարժական որևէ տեխնոլոգիա կամ մեթոդ ընտրելիս նախ և առաջ պետք է հաշվի առնի իր աշակերտների առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, ունակությունների մակարդակը: Մանկավարժական տեխնոլոգիաները միտված են ոչ թե բարդացնելու ուսուցման գործընթացը, այլ՝ առավել դյուրին դարձնել այն: Ինչպես նաև ուսուցիչը այդ մեթոդներն ու տեխնոլոգիաները կիրառելիս պետք է հաշվի առնի, որ իր աշակերտների թվում կան այնպիսիները, որոնք ունեն այս կամ այն խնդիրները և պետք է այնպես հարմարեցնի այդ ամենը, որ արդյունքում բոլոր աշակերտների համար օգտակար լինի իր կողմից կիրառված մեթոդը կամ տեխնոլոգիան:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ճիշտ ընտրված մեթոդի կիրառումը պատմության դասավանդման ընթացքում ուսուցչին մշտապես օգնում է աշակերտի մեջ ձևավորելու համագործակցային կարողունակություն, ինչը մեր օրերում կարևոր հմտություն է և առանցքային դեր ունի աշակերտների՝ սոցիալական միջավայր ինտեգրման ու նրանց հասարակական գիտակցության բարձրացման գործում:

Մեր ուսումնասիրության նպատակն է քննել համագործակցային կարողությունների ձևավորման առանձնահատկությունները պատմության դասավանդման գործընթացում: Նշված նպատակից բխում են հետազոտության **հետևյալ խնդիրները.**

ա. բնութագրել ուսուցման նորագույն մեթոդներն անձնակենտրոն ուսուցման համակարգում,

բ. հիմնավորել համագործակցային մեթոդի կիրառման անհրաժեշտությունը,

գ. քննել սովորողի անհատական և հոգեբանական առանձնահատկությունների հաշվառումը համագործակցային կարողունակության ձևավորման գործընթացում,

դ. քննել սովորողի դրդապատճառների, պահանջմունքների, հուզազգայական ոլորտի հաշվառումը համագործակցային ուսուցման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ժամանակակից ուսուցման հայտնի եղանակներից մեկը համագործակցության մանկավարժական տեխնոլոգիան է: Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիան իմաստավորվում է համատեղ գործունեության և կոլեկտիվ հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հաղորդակցման ձևեր կարող են լինել կազմակերպված երկխոսությունը, զուգորդված երկխոսությունը, աշակերտների զույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը: Համագործակցային ուսուցումը ենթադրում է անձնակենտրոն մոտեցում: Անձնակենտրոն մոտեցումը, ամրագրելով կրթական գործընթացի մասնակիցների՝ սուբյեկտ-սուբյեկտ հարաբերությունները, կրթական գործընթացը կողմնորոշում է դեպի անհատը, նրա ընդունակությունների առավելագույն զարգացումը: Այս պայմաններում սովորողն իր պահանջմունքներով, հետաքրքրություններով, ձեռք բերած փորձով դառնում է կրթական գործընթացի ակտիվ մասնակից, գլխավոր գործող անձ, որն ունակ է գիտակցել ձևավորված գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձնային որակների, սոցիալական և գործնական փորձի, արժեքային կողմնորոշիչների նշանակությունը, ողջ կյանքի ընթացքում ինքնակրթությամբ զբաղվելու (սովորելու) անհրաժեշտությունը, սոցիալական հմտությունների կարևորությունը ժամանակակից աշխարհում, գիտելիքների ձեռքբերման, ամրապնդման, իրական կյանքում դրանց կիրառման, սոցիալական և ինքնաճանաչման հմտությունների զարգացման գործում համագործակցային և կոլեկտիվ աշխատանքի հմտությունների կարևորությունը՝ որպես հասարակության մեջ անհատի գոյատևման, ինքնադրսևորման ապահովման միջոց:

Այս տեխնոլոգիայի համար հիմք են հանդիսացել ամերիկացի հոգեբան և մանկավարժ Ջոն Դյուիի, ռուս հոգեբան Լև Վիգոտսկու և շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեյի աշխատությունները: Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման

այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս [1]:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»[2]:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի կիրառումը կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնական փուլերի՝

1. ուսումնական նյութի նախապատրաստում,
2. աշակերտների նախապատրաստում համատեղ աշխատանքին,
3. բուն ուսումնական աշխատանքի ընթացքը:

Սա այն տեխնոլոգիաներից է, որի ներդրումը կրթություն կարևոր պայման է հանդիսանում: Քանի որ կրթության ամբողջ նպատակը կրթությաներեխաների ներգրավելն է ուսուցման գործընթացին և բացի այդ ինտեգրելը կոլեկտիվում՝ առանց որևէ խտրականության: Իսկ այս տեխնոլոգիան հենց ինքը մի միջոց է, այս նպատակը իրականացնելու համար, քանի որ ինչպես նշվեց այս տեխնոլոգիայի հիմքում ընկած է համագործակցային, կոլեկտիվ աշխատանքի ձևը, և սա մի միջոց է որով կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները կարող են համատեղ աշխատել մյուս աշակերտների հետ: Դա կարող է իրականացվել թե՛ զույգերով և թե՛ խմբակային աշխատանքի ձևով: Սա կնպաստի նրան, որ թույլ կարողություններով

[1]Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան, 2011, էջ 24:
[2] Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, էջ 18:

երեխան կաշխատի և կհամագործակցի առավել բարձր կարողություններով աշակերտի հետ և աջակցություն կստանա վերջինիս կողմից: Հայտնի է, որ խմբակային կամ զույգերով աշխատանքը ավելի է մտերմացնում աշակերտներին, այսինքն՝ դա նպաստում է, որ կրթության երեխաները իրենց զգան կոլեկտիվի մի մաս և այնտեղ ունենան իրենց ուրույն դերը: Այս ամենը առավել լավ պատկերացնելու համար տեսնենք, թե իրականում այս տեխնոլոգիան ինչպես է կիրառվում ուսուցման գործընթացում.

Ուսումնական նյութի նախապատրաստական փուլում կատարվում է.

- ուսումնական նյութի ընտրություն, դրա բաժանում տրամաբանական հատվածների,
- լրացուցիչ նյութի ընտրություն,
- թիմային աշխատանքի տեսակի ընտրություն:

Աշակերտների նախապատրաստումը համատեղ աշխատանք կատարելու կարողությունների ձևավորման փուլում կատարվում է.

- ուրիշին լսելու կարողությունների ձևավորում,
- ուրիշի տեսակետի մասին կարծիք արտահայտելու կարողությունների ձևավորում,
- սեփական կարծիք արտահայտելու և այն հիմնավորելու կարողությունների ձևավորում,
- անհրաժեշտ տեղեկատվություն հայթայթելու կարողությունների ձևավորում,
- մտապատկերը խոսքի միջոցով արտահայտելու և բանավոր խոսքը մտապատկեր դարձնելու կարողությունների ձևավորում,
- վերլուծություն և համադրություն կատարելու կարողությունների ձևավորում,
- եզրահանգումներ կարատելու կարողությունների ձևավորում և այլն:

Բուն ուսումնական աշխատանքի կատարման փուլում կարող է կազմակերպվել.

- փոխադարձ ուսուցում ուսուցիչ – աշակերտ դեերային խաղի տեսքով,
- զույգերով մտքերի փոխանակման, լրացուցիչ տեղեկատվության որոնման տեսքով,
- փոքր և մեծ խմբերով յուրացման և որոնողական աշխատանք կազմակերպելու միջոցով:

Ուսուցման այս տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է .

• ուսուցման արդյունավետության բարձրացմանը՝ ավելի լավ է յուրացվում և մտապահվում ուսումնական նյութը,

• տրամաբանական մտածողության զարգացմանը,

• խթանում է ուսման բարձր ճանաչողական դրդապատճառների ձևավորմանը,

• ինքնուրույն, առանց գիտելիքներ ձեռքբերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,

• ուրիշներին գնահատելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,

• նպատակներ ձևավորելու և դրանց իրականացնելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,

• համագործակցային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,

• վերլուծելու, համադրելու և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,

• ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Անձնակենտրոն տեխնոլոգիայի տարրերը, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են. 1.դրական փոխկախվածություն, 2. դեմ առ դեմ փոխազդեցություն, 3. անհատական հաշվետվություն և պատասխանատվություն, 4. միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ, 5. խմբային գործընթացի մշակում: Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը[3]:

Պասի Սահլբերգը փոխներգործուն /ինտերակտիվ/ առաջադրանքը դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: «Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ»[4]: Նույն խնդրին է անդրադառնում նաև դոկտոր Պասի Սալիբերգը ուսուցման և ուսումնառության առումով համագործակցային աշխատանքի առավելությունները նշելիս: Նրա կարծիքով փոքր խմբային աշխատանքն ունի առնվազն երեք առավելություն:

---

[3] Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, 2006, էջ 29:

[4]Խաչատրյան Ս. Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, ՝Նախաշավիղ՝, 1. 2003, Երևան, էջ 17-24:

Ամենից առաջ այն նպաստում է ուսումնական նյութի բովանդակային կողմի ընկալման բարելավմանը, գիտելիքների երկարաժամկետ մտապահում, հասկացությունների, սկզբունքների, երևույթների ու իրադարձությունների ըմբռնում ու յուրացում: Սա, թերևս, կարելի է բացատրել ուսուցման գործընթացում խոսելու, քննարկելու և փոխազդելու լայն հնարավորությամբ:

Փոքր խմբային աշխատանքը հնարավորություն է ընձեռում սովորողներին հանդես գալ այնպիսի իրավիճակներում, որոնցում նրանք իմացական նպատակներին հասնելուն համընթաց կարող են զարգացնել նաև սոցիալական, հաղորդակցական հմտություններ: Ընդ որում, փոքր խմբերով լավ կազմակերպված աշխատանքի դեպքում նախ հստակեցվում են հիմնական սոցիալական հմտությունները, ապա հետևողականորեն ուսուցանվում:

Համագործակցային աշխատանքը ձևավորում է դրական դիրքորոշում, նպաստում ուսումնառության նկատմամբ սովորողների տեսակետների, մոտեցումների և արժեքների բարելավմանը[5]:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Համագործակցային կարողունակությունը սովորողների ինքնաճանաչման կարևոր հմտություններից է, որի միջոցով վերջիններս ինքնանդրադարձման ու ինքնակազմակերպման միջոցով կարող են հասնել ինքնաճանաչման՝ ձևավորելով վստահություն սեփական ուժերի նկատմամբ և հաջողությամբ կառավարելով իրենց գիտելիքները: Համագործակցային աշխատանքի ժամանակ սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն ու պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այլև դասընկերների նկատմամբ: Նրանց սոցիալական հարաբերություններում դրսևորվում են կառուցողական, համերաշխ, ընկերակցելու ունակություն և խնդիրները կարգավորելու համագործակցային հմտություններ:

Մեր հետազոտության իրականացման ընթացքում որպես թեմա ընտրել ենք պատմագրական երկերի ուսուցումը: Պատմագրական երկերի ուսուցումը հանրակրթական դպրոցի գրականության դասընթացում կարևոր դերակատարում

[5] Pasi Sahiberg. “Elements of Cooperative Learning”, University of Helsinki, Finland, 2002. P. 16.

ունի, քանի որ աշակերտին գրապատմական ու տեսական գիտելիքներ հաղորդելու առաջին փուլը սկսվում է ազգային գրականության մասին ընդհանուր տեղեկություններով: Ուսուցիչը պետք է աշակերտին բացատրի՝ ինչ է ազգային գրականությունը, երբ է ձևավորվել, որքանով է նպաստել մարդկային բարձր ու լավ հատկանիշների պատվաստմանը սերունդների գիտակցության ու մտածողության մեջ: Այսպիսով՝ մեր նպատակն է քննել պատմագրական երկերի ուսուցման մեթոդիկան: Պատմագրական երկերի ուսուցման մեթոդիկայի քննության շրջանակներում առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

ա.բացահայտել հին Հայաստանի մշակույթը,

բ. հայկական վիպերգերն ու առասելները,

գ.հինգերորդ դարի պատմիչների երկերը,

դ. հայոց նախաքրիստոնեական հավատքը, դիցարանը:

Մեր ուսումնասիրությունը արդիական նշանակություն ունի, քանի որ ընդգրկում է հնագույն շրջանի հայկական գրավոր ու բանավոր մշակույթը, որը կազմում է հայ գրականության հիմքը, ոսկեդարը: Ճիշտ մեթոդների կիրառությամբ ուսուցիչը կարող է ոչ միայն աշակերտներ համապատասխան գիտելիքներ տալ «հայոց պատմություն» առարկայից, այլև նրա մեջ արմատավորել ազգային մտածողություն, միջառարկայական կապերի կիրառմամբ՝ պատմական կարևոր իրողությունների իմացություն, ազգային արժեքների գնահատում, սոցիալական կարողունակություն և այլն:

Հայոց պատմություն ուսումնասիրող աշակերտը պետք է պատկերացում ունենա հայ ժողովրդի պատմական ուղու, քրիստոնեության ընդունման, հեթանոսության, նախագրային շրջանի հայ դպրության, հայոց լեզվի և այլ հարցերի մասին: Հինգերորդ դարը հայ ժողովրդի կյանքում բացառիկ ժամանակաշրջան է: 11—12 տարեկան երեխաները, որոնք մանկությունից պատանեկություն անցում են կատարում, ունեն վառ երևակայություն և առարկայական զարգացած հիշողություն, ուստի նման թեմաների ուսուցման ժամանակ կարելի է նրանց թելադրել հետաքրքիր փաստեր, հանձնարարել կարդալ համապատասխան գրականություն, պատմիչների երկերից քաղվածքներ անել գրականության տետրում և այլն:

Հայոց պատմության դասընթացին զուգահեռ աշակերտները հայ ժողովրդի պատմաքաղաքական իրողությունների մասին պատկերացում պիտի կազմեն նաև

գրականության դասընթացից: Ինքնին հասկանալի է, որ առանց պատմական փաստերի իմացության աշակերտները չեն կարող վերլուծել հնագույն հայկական մշակույթի առանձնահատկությունները: Պատմագրական երկերի ուսուցումը պետք է սկսել «Մաշտոցը և հայ գրերի գյուտը» թեմայի դիտարկումով, քանի որ գրերի գյուտն է սկզբանավորել հայ մշակույթի ու գրականության ոսկեդարը, որի անբաժանելի մասն են կազմում հինգերորդ դարի մեր պատիչների երկերը:

Թեմայի ուսուցումը սկսելուց առաջ ուսուցիչը աշակերտներին պետք է ներկայացնի տիրող ժամանակաշրջանի ու այդ ընթացքում ծավալված իրադարձությունների մասին: Չորրորդ դարի սկզբին Հայաստանը որպես պետական կրոն ընդունում է քրիստոնեությունը: Այդ տարիներին Մեսրոպ Մաշտոցը աշակերտների հետ շրջագայում է Հայաստանի տարբեր գավառներում և տարածում է քրիստոնեական վարդապետությունը: Իր ուսուցչական և քարոզչական գործունեության ժամանակ Մաշտոցը Աստվածաշունչը բանավոր թարգմանում էր հայերեն՝ լսողներին ավելի հասկանալի դարձնելու համար: Այս ընթացքում նա զգում է հայոց գրի և գրականության անհրաժեշտությունը: Արքունիքում աշխատելիս, զգալով նաև հայոց պետականության մոտալուտ անկումը, նա իր ժողովրդին ձուլման վտանգից փրկելու համար կազմում է մի հրատապ ծրագիր՝ հայացնել քիստոնեական արարողությունները, հայերեն թարգմանել քրիստոոնեական գրքերը, ստեղծել ինքնուրույն հայերեն գրականություն և դրանով վերականգնել մասնատված հայրենիքի հոգևոր և մշակութային միասնությունը: Այդ միասնությունն էլ հիմք պիտի դառնար հայկական անկախ և հզոր պետականության վերականգնման համար: Կարևոր է աշակերտներին իրազեկել, որ Մաշտոցի մահից հետո՝ 443 -450-ական թվականներին, նրա աշակերտներից մեկը՝ Կորյունը, գրել է մեծ ուսուցչապետի կենսագրությունը («Վարք Մաշտոցի»): Կորյունի նպատակն է եղել, ներկայացնելով Մաշտոցի կյանքի, հատկապես գրերի գյուտի պատմությունը, գովաբանել ուսուցչի անձն ու գործը: Եվ նա լիովին հասել է իր նպատակին: «Վարք Մաշտոցի» երկը 5-րդ դարի սկզբին Հայաստանում ծավալված մտավոր ու քաղաքական կյանքի առաջին հավաստի պատմությունն է՝ գրված ականատեսի գրչով: Կորյունը, փաստորեն, ի դեմս Մեսրոպ Մաշտոցի, կերտել է հայ կրթական, լուսավորչական գործչի, գաղափարական հերոսի առաջին պատմագեղարվեստական կերպարը:

Մաշտոցի կերպարի վերլուծությունը կարող է կատարվել պրիզմայի մեթոդով՝



Սահիկի օգնությամբ ուսուցիչը ներկայացնում գրերի գյուտին նախորդող և հաջորդող իրադարձությունների ողջ ընթացքում: Նշվում է՝ ինքնուրույն գրականություն ստեղծելուց առաջ նախ անհրաժեշտ էր հայացնել համաշխարհային գիտության ու մշակույթի կարևոր նվաճումները: Այդ իսկ պատճառով Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևն իրենց աշակերտների հետ ամենից առաջ ձեռնամուխ են լինում թարգմանական մեծ գործունեության: Հունարենից, ասորերենից թարգմանում են բոլոր այն կրոնական գրքերը, որոնք անհրաժեշտ էին հայ եկեղեցու ու դպրոցի կարիքները հոգալու համար: Դրանց հետևում են նաև փիլիսոփայական, ճարտարապետական, պատմական և քերականական գրքերի թարգմանությունները: Դրանց շնորհիվ զարգանում է հայ փիլիսոփայական, բնագիտական, պատմագիտական մտածողությունը, սկիզբ է դրվում հայոց լեզվի քերականության ուսումնասիրությանը: Կարևոր է այն հանգամանքը, որ այդ ժամանակ թարգմանված գրքերի մի զգալի մասն այժմ աշխարհին հայտնի է միայն հայերեն թարգմանություններով, քանի որ հունարեն և ասորերեն բնագրերը չեն պահպանվել: Այնուհետև անցում է կատարվում պատմագրական երկերի

ուսուցմանը, որը իրականացվում է ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդներով:

Ընթերցումը այն մեթոդն է, որը լայն կիրառություն ունի հատկապես ցածր և միջին դասարաններում: Անցնելիք գեղարվեստական ստեղծագործությունը ուսուցիչը կամ աշակերտները կարդում են արտահայտիչ ձևով: Օրինակ՝ Խորանացու «Հայոց պատմությունը» անցնելիս աշակերտները կարդում են Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Տիգրանի և Աժդահակի, Արտաշեսի և Սաթենիկի մասին վիպերգերը և ուսուցչի օգնությամբ փորձում են վերլուծել՝ բացահայտելով վիպերգներում արծարծվող հիմնական գաղափարները:

Վերաշարադրումը հայկական մշակույթի, գրերի գյուտի և նմանօրինակ այլ թեմաների ուսուցման հիմնական մեթոդներից է: Աշակերտը նախապես կարդում է համապատասխան նյութը և փորձում է համառոտ վերաշարադրել նյութը, ինչն էլ ուսուցչին հնարավորություն է տալիս ընկալելու՝ արդյոք աշակերտը հասկացել է հայկական մշակույթի հիմնական նշանակությունը: Հնագույն հայկական մշակույթի ուսուցման ժամանակ վերաշարադրման մեթոդի կիրառությունը հնարավորություն է տալիս բացահայտելու հայկական մշակույթի ակունքները և ընկալելու 5-րդ դարի պատմիչների ստեղծագործություններում ամրապնդված գաղափարներն ու պատմիչների առաջադրած նպատակներն իրենց գործերում: Օրինակ՝ Ագաթանգեղոսի նպատակն է հաստատել քրիստոնեության գերազանցությունը հեթանոսության նկատմամբ, Բուզանդի նպատակն է քարոզել հայոց տերերի միաբանության գաղափարը, Փարպեցին դրվատել է քրիստոնեական կրոնն ու բարոյականությունը, Խորենացու նպատակն է եղել բացահայտել հայ ժողովրդի նախնականությունն ու փառավոր գործերը և այլն:

Պատմիչների քարոզած դասերը կարելի է ընկալել մեկնաբանման մեթոդի օգնությամբ: Այսպես՝ ուսուցիչը առաջադրում է հարց. ինչո՞ւ են Խորենացու «Հայոց պատմությունը» համարում «հայ ժողովրդի ծննդյան վկայական»: Աշակերտները տալիս են մեկնաբանություններ: Նշված մեթոդի կիրառման ժամանակ հնարավոր է զուգադրել նաև «մտագրոհ» մեթոդը: Ուսուցիչը կարող է աշակերտների մեկնաբանությունները ամփոփելով՝ ներկայացնել նշված հարցի պատասխանը: Ուսուցիչը նույն թեմայի ուսուցման շրջանակներում մեթոդները պետք է համադրի, փոփոխի, մշակի և ծրագրի այնպես, որ նույն դասարանում տարբեր կարողություններով սովորող աշակերտները ստանան իրենց կարողությունների

համապատասխան գիտելիքներ ու հմտություններ և արդյունքում չտուժեն ոչ բարձր կարողություններով ոչ էլ կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները:

Նշված մեթոդները համարվում են ավանդական: Բացի ավանդական մեթոդներից՝ հայկական մշակույթի ուսուցման ժամանակ կիրառվում են նաև ժամանակակից, մասնավորապես համագործակցային մեթոդներ, որոնց հիմքում ընկած են սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման ընթացքին նրա անմիջական ու գործուն մասնակցությունը: Այս մեթոդների առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով՝ մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով խմբային աշխատանքներում: Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական կարողունակության և հաղորդակցական, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքը կիրառելու կարողություններ:

Փոխգործուն մեթոդներն արդյունավետ են հատկապես խմբային աշխատանքների կամ համագործակցային ուսուցման ժամանակ: Խմբի բոլոր աշակերտները պատասխանատու են դառնում աշխատանքի իրենց բաժինը ուղարկելու և նյութը յուրացնելու համար: Օրինակ՝ աշակերտներին հանձնարարվում է կատարել խմբային աշխատանք՝ վերլուծելով Ագաթանգեղոսի «Հայոց պատմության», մասնավորապես Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Երրորդ Մեծի կերպարները: Նշված թեմայով կարելի է կազմակերպել նաև գրական դատ: Աշակերտներն այս դեպքում արձագանքում են միմյանց կատարած աշխատանքին, հարցեր են տալիս, քննարկում են կատարած եզրահանգումները և այլն: Հետազոտությունները ցույց են տալիս, որ համագործակցային մեթոդով սովորած աշակերտները դրսևորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խորը ընկալում, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին:

Աշակերտների մեջ սոցիալական կարողունակության զարգացման համար հաճախ համադրում ենք համագործակցային ու փոխգործուն մեթոդները: Օրինակ՝ Վենի դիագրամը, որը կառուցվում է երկու կամ ավելի շրջանագծերով, որոն հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է կիրառել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները բացահայտելու նպատակով: Մեթոդը հնարավոր է կիրառել ամփոփման, իսկ եթե նյութը ծանոթ է, նաև նախապատրաստական փուլում: Այսպես՝ Վեննի գծապատկերով հնարավոր է հակադրել Տրդատ Երրորդ Մեծի կերպարը մինչև քրիստոնեության ընդունումը և

դրանից հետո: Նշված մեթոդով կարելի է դիտարկել Եղիշեի «Վասն Վարդանա և Հայոց պատերազմին» երկի դրական ու բացասական կերպարներին:

Ամբողջ խմբի հետ համագործակցային եղանակով աշխատելու նպատակով ուսուցիչը կարող է պատմիչների ասույթները կամ պատմագրական երկերում ծավալվող իրադարձությունները գրառել առանձին թղթերի վրա: Դասարանին առաջարկվում է որոշել՝ որ ասույթի հեղինակը որ պատմիչն է, և որ իրադարձությունը պատմագրական որ երկում է ծավալվել: Աշակերտները մեկ-մեկ մոտենում են և ընտրելով համապատասխան բառերը՝ կազմում են ճիշտ ասույթը և արտաբերում պատմիչի անունը: Երբ բոլորը համաձայնության են գալիս, ուսուցիչը հանձնարարում է ընթերցելիս ուշադիր զննել տեքստը ու տեսնել՝ արդյոք դասավորությունը համապատասխանում է տեքստի տարրերի դասավորությանը: Նշված մեթոդը կիրառելի է պատմագրական երկի ուսուցման բոլոր փուլերում:

Խորանարդում մեթոդն օգնում է առաջադրված հարցը դիտարկել տարբեր տեսանկյուններից: Ստվարաթղթից պատրաստված խորանարդի վեց նիստերից յուրաքանչյուրի վրա գրվում է առաջադրանքներից մեկը, օրինակ՝ Ո՞ր պատմիչի երկն է ընդգրկում 387-480-ական թվականներ ընկած ժամանակաշրջանը: Կամ՝ Ո՞վ է Խորենացու պատմության մեկանասը և այլն:

Խորենացու պատմության դասերը կարելի բացահայտել նաև մտագրոհ մեթոդի օգնությամբ: Այն խմբային թիմային աշխատանք է: Խմբի անդամների միջև կոնկրետ խնդիր է դրվում, նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները: Բոլոր մոտեցումներն ու գաղափարները գրանցվում են թղթի կամ գրատախտակի վրա: այսպես.

Ա. Խորենացու երկը հայ մատենագրության առաջին հուշարձանն է, որն ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ ազգի կազմավորումից մինչև հեղինակի ապրած ժամանակները: Պատմիչը առաջինը փորձեց ցույց տալ՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ինչ ճանապարհ ենք անցել: Այս մատյանը հայոց նախնական պատմության առաջին և ամենահավաստի աղբյուրն է:

Բ.Պատմահոր մատյանը հայ իրականության մեջ քննական պատմություն ստեղծելու առաջին փորձն է: Ինչպես Եղիշեն և Ղազար Փարպեցին, Խորենացին ևս ձգտել է գրել քննական պատմություն: Այսինքն՝ ընտրել, ստուգել և ճշգրտել է իրեն հայտնի բոլոր փաստերը: Նրա գործը շատ ավելի դժվար է եղել, քանի որ եթե Եղիշեն ու Փարպեցին գրել են միայն իրենց ժամանակաշրջանի պատմությունը, ապա

Խորենացին գրել է երկար ու ձիգ տարիներ պատմություն: Նա և՛ պատմագիր է, և՛ պատմագետ: Խորենացին չի գրել չիմացած բաներ և առանց քաշվելու նշել է, որ այս կամ այն փաստի իրեն հայտնի չէ:

Գ.Պաշտպանելով «Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության» սկզբունքը՝ Խորենացին աշխատել է հնարավորինս ճիշտ որոշել հայոց թագավորների ու հոգևոր անվանի առաջնորդների իշխանության տարիները: Այս ամենի շնորհիվ Խորենացին ստեղծել է համապարփակ և ստուգապատում մի երկ, որում արտացոլված են հին Հայաստանում ծավալված կարևոր քաղաքական իրադարձությունները, երկրի աշխարհիկ ու հոգևոր կյանքը:

Դ.Խորենացին իր հավաքած տարաբնույթ նյութերն օգտագործում էր ոչ թե նույնությամբ, ինչպես գտել է աղբյուրներում, այլ փաստերի մանրազնին քննության ու խոր վերլուծության սկզբունքով: Երբեմն նույնիսկ իրար հակասող բազմազան աղբյուրների մեջ էլ նա կարողացել է ճիշտ կողմնորոշվել, տարբերել հավանականն անհավանականից, ճշմարիտը՝ կեղծիքից և այլն:

«Մտածի՛ր-զուգորդի՛ր-մտքեր փոխանակի՛ր»-ը արագ կատարվող համատեղ ուսումառության վարժություն է, որն աշակերտներին առաջարկում է կշռադատել տեքստի շուրջ և փոխգործուն մեթոդով ընկերների օգնությամբ ձևավորել մտքերը: Ուսուցիչը նախապես հարցեր է պատրաստում և առանձին աշակերտների առաջարկում է գրել այդ հարցերի պատասխանները: Այնուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որը ամբողջացնում է երկուսի գաղափարները: Վերջում ուսուցիչը հարցնում է այնքան թվով զույգերի, որքան թույլ է տալիս ժամանակը, ապա քննարկում են արդյունքները:

Այսպիսով՝ համագործակցային կարողունակության ձևավորումն ու զարգացումը ապահովվում է դասի կազմակերպման համագործակցային, ինչպես նաև այլ մեթոդների զուգակցմամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով հարցաթերթիկային հարցումը և զրույցի մեթոդը՝ 30 աշակերտի հետ իրականացրել ենք հետազոտական աշխատանք։ Հետազոտության ընտրանքը կազմել են 11-12 տարեկան աշակերտները։ Մինչև հնագույն հայկական մշակույթի ուսուցմանն անցնելը աշակերտների հետ անցկացրել ենք դաշտային աշխատանք հետևյալ հարցերի շրջանակում.

1. Հայկական ի՞նչ վիպերգեր գիտեք։
2. Ի՞նչ է դիցարանը։
3. Ի՞նչ կազմ ուներ հայոց դիցարանը քրիստոնեության ընդունման նախօրյակին։
4. Քրիստոնեության ընդունումից առաջ ի՞նչ գրահամակարգեր են կիրառվել Հայաստանում։
5. Նախաքրիստոնեական գրի ու գրականության մասին ի՞նչ տեղեկություններ են հաղորդում հայ պատմիչները։
6. Ո՞ր պատմիչն է անդրադարձել Հռիփսիմյան կույսերի վկայաբանությանը։
7. Պատմագրական ո՞ր երկի գլխավոր կերպարն է Գրիգոր Լուսավորիչը։
8. Ո՞վ է Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» մեկենասը։
9. Ո՞ր պատմիչի մատյանն է ընդգրկում շուրջ հարյուր տարվա պատմություն։
10. Քանի՞ մասից է բաղկացած Խորենացու «Հայոց պատմությունը»։

Առաջարկել ենք պատասխանի 2 հնարավոր տարբերակ՝ գիտեմ /գրելով պատասխանը/ և չգիտեմ։ Ստացել ենք այսպիսի պատկեր.



Գծապատկեր 1

Հաջորդ մեթոդը կիրառելով՝ բացահայտեցինք, որ թեմային տիրապետող աշակերտների գիտելիքները ևս թեմայի վերաբերյալ համապարփակ չեն: Դաշտային մեթոդով իրականցրած աշխատանքի ընդհանուր պատկերը ներկայացրել ենք Գծապատկեր 1-ում:

Հետազոտության առաջին փուլից հետո իրականացրինք թեմայի ուսուցումը ԽԻԿ համակարգով, որից հետո աշակերտներին տվեցինք նախագծային հանձնարարություններ՝ նրանց բաժանելով 4 խմբի: Մի խմբին հանձնարարեցինք ուսումնասիրություններ կատարել և ներկայացնել հայոց դիցարանը, առասպելներն ու վիպերգերը, 2-րդ խմբին՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջանի մշակույթը, գրային համակարգը, 3-րդ խմբին՝ քրիստոնեության ընդունումն ու գրերի գյուտը, 4-րդ խմբին՝ հայկական մշակույթի ոսկեդարը: Նախագծային աշխատանքի ընթացքում փորձեցինք նաև հետևել աշակերտների սոցիալական կարողունակության ձևավորման ու զարգացման ընթացքին: Երբ աշակերտները ներկայացրին իրականացված աշխատանքը, նախ փոխվեց մեր հարցման պատկերը, քանի որ բոլոր աշակերտները թեմայի վերաբերյալ ստացան համապարփակ գիտելիքներ՝ առաջին հերթին իրենց որոնողական, հետազոտական կարողությունները զարգացնելով, մյուս կողմից՝ աշակերտները զարգացրին միմյանց օգնելու, համագործակցաբար աշխատելու, փոխըմբռնման ու փոխօգնության այնպիսի հատկանիշներ, որոնք ընկած են սոցիալական կարողունակության ձևավորման ու զարգացման առանցքում:

Դաշտային աշխատանքի միջոցով իրականացված հարցումը ցույց տվեց, որ սոցիալական կարողունակության ձևավորումն ու զարգացումը ուսումնական գործընթացում որոշակի քայլաշար են ենթադրում։ Բացահայտելով սոցիալական կարողունակության ձևավորման հնարավորությունները՝ կարող ենք այդ գործընթացում համադրել նախագծային ու պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիաների կիրառությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական մշակույթի ուսուցումն բովանդակությամբ ու գիտաքննական մեկնաբանմամբ նպաստում է աշակերտի ազգային բնավորության և առողջ հայրենասիրության, սոցիալական կարողունակության ձևավորմանը: Նմանօրինակ թեմաների ուսուցումը նպաստում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերմանը, այլև պատմական ճշմարտության գիտակցմանն ու գեղարվեստական մտածողության զարգացմանը:

Հայկական մշակույթի ուսուցումը նպաստում է միջառարկայական կապերի ամրապնդմանը.

ա. Հայ ժողովրդի պատմություն,

բ. հայոց լեզու /գրաբարյան բառաշերտ, բանահյուսական շերտ, արդի գրական հայերեն/,

գ. հայկական արվեստ /երաժշտություն, նկարչություն, թատրոն, քանդակագործություն/:

Նշված թեմայի ուսուցումը հնարավոր է իրականացնել հետևյալ դասատեսակների օգտագործումով՝ դաս- դասախոսություն, զրույց, բանավեճ, դաս-գրական դատ, դաս-երկխոսություն, ստուգողական հարցարանի բանավոր պատասխան:

Հանձնարարվող գրավոր աշխատանքների տեսակներն են՝ վերլուծական շարադրություն, գեղարվեստական շարադրություն, կերպարների բնութագրություն, պատմագրական երկի առանձին հատվածների փոխադրում, ստուգողական հարցաշար և այլն:

Հայկական մշակույթի ուսուցումը, յուրացումը, ուսուցչի և դասագրքի հաղորդած գիտատեսական գիտելիքները ընդլայնում են աշակերտների գրաքննադատական, գեղարվեստական մտածողությունը, կրթում նրանց գրական ճաշակը: Հայկական մշակույթին առնչվող նյութի ուսուցման մեթոդական կատարելությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի՝ պատմական սկզբնաղբյուրների համապատասխան քաջիմացության հետ՝ առավել լայն ընդգրկումով, իսկ համագործակցային տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է աշակերտների քննադատական մտածողության, հետազոտական աշխատանք կատարելու հմտությունների ու սոցիալական կարողունակության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Լ. Ուսուցման մեթոդներ. Դրանց կիրառությունը// «Նախաշավիղ», Երևան, 2013, N2:
2. Խաչատրյան Ս. Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, ՝Նախաշավիղ՝, Երևան, 1. 2003:
3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան, Համագործակցային ուսուցում, Երևան, 2006:
4. Մանկավարժություն (թարգմ. Հ. Հարությունյան), Երևան, 1948:
5. Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան, 2011:
6. Pasi Sahiberg. “Elements of Cooperative Learning”, University of Helsinki, Finland, 2002.